

## «Չինական դասական պոեզիա»

Նոյեմբերի 28-ին Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանի «Չինական դասական պոեզիա» գրքի շնորհանդեսը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, Հայաստանի Ազգային ժողովի հայ-չինական բարեկամության խմբի ղեկավար Հերմինե Նադդայանը, Հայաստանում Չինաստանի արատակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունը, բանաստեղծ Լիպարիտ Մարգսյանը, գրողներ, բանաստեղծներ, կրթության, գրադարանային բնագավառների ներկայացուցիչներ, բուհերի ուսանողներ, չինարեն սովորող դպրոցականներ: Երևանի թիվ 135 դպրոցի սաները ներկայացրեցին բանաստեղծություններ գրքից՝ հայերեն և չինարեն լեզուներով: Գիրքը ներկայացրեց պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների, դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը: Ազգային գրադարանի մեծ ցուցասրահում ներկայացված էր հայ-չինական մշակութային, առևտրատնտեսական կապերին նվիրված գրականության ցուցադրություն: Միջոցառման բանախոսն էր Հայաստանի ազգային գրադարանի Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը:



